

ՀԵՂԱՎԱՐԻ ԿԱՆՈՆԱԳԻՒ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀԱՄԱՁԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ



ՀԻՄՆՈՒԱԾ

1928 ՄԱՅԻՍ 28-ԻՆ

Գ. Ա. Հ Բ Բ Ե

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՈՒՂԻՆ

1. «Հայ Կրթական և Հրատարակչական Համազգային Ընկերութեան» նպատակն է հայ ժողովուրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզուով և հայ հոգիով :

Այդ նպատակին համար ընկերութիւնն հետարգհեաէ, իր նիւթական կարողութիւններուն աճումին չափովը, պէտք է աշխատի երեք ուղղութեամբ, որ է՝ նոր սերունդին կրթութիւնը, չափահասներուն ինքնազարգացումը և հայոցիառութեան մշակումը :

2. Համեող սերունդի կրթութեան համար՝

ա. Պիտի հիմնէ մէկ-երկու ճիւղամի միջնակարգ վարժարաններ, եւրոպական գոլէճներու և լիսիներու համաստիճան :

բ. Պէտք է բանայ մանկական հաստատութիւններ, քառամեայ և ութնամեայ դպրոցներ, ինչպէս և երեկոյեան, շրջուն և այլ պարբերական դասընթացներ՝ յարմարուելով տեղին ու պահանջին :

գ. Պէտք է կազմակերպէ հայերէն լեզուով դա-

սագրքերու պատրաստութեան և հրատակութեան դործը :

դ . Պէտք է կազմակերպէ մանուկներու և պատանիներու համար ընթերցանութեան գրքերու, գիտական ու պատմական ընթերցարաններու և պարբերականներու հրատարակութիւնը :

3 . Հասակաւորներու ինքնազարգացման համար՝

ա . Պէտք է կազմակերպէ շրջուն-պարբերական դասախոսութիւններ հայ կեռնքի, պատմութեան ու գրականութեան մասին . ինչպէս և ընդհանրապէս պատմական, ընկերական տնտեսագիտական, բնագիտական ամէն տեսակ նիւթերու շուրջ :

բ . Պէտք է կազմակերպէ ինքնազարգացման նպաստելու և չափահասներու ընթերցանութիւնը զեկավարելու պարբերական մը, բիւրօ մը և շրջուն վարիչներ :

գ . Պէտք է կազմակերպէ հանրամատչելի գիտական երկերու հայերէնի վերածումը և հրատարակութիւնը . նոյնպէս ինքնազիր հայերէն ուսումնասիրութիւններու հրատարակութիւնը . ինչպէս և ինքնազիր ու թարգմանական գրական-գեղարուեստական ստեղծագործութիւններու հրատարակութիւնը :

դ . Պէտք է ձեռնարկէ հին ու նոր հայ հեղինակներու ժողովրդական հրատարակութեանը թէ՛ առանձին հատորի կամ երկու և թէ անոնց լաւագոյն երկերուն և լաւագոյն էջերուն ծաղկաքաղը : Ինչպէս և գրաքար հեղինակութիւններու աշխարհաբարի վերածումը :

ե . Պէտք է ձեռնարկէ ամէն տեսակի պատմական, գրական, աշխարհագրական, կենցաղագիտական, ճարտարապետական պատկերազարդ ալպոմներու, քարտերու, քարտէզներու և շարք-նկարներու հրատարակութեանը :

4 . Հայագիտութեան զարգացման համար՝

ա . Պէտք է ձգտի օժանդակելու հայագիտական երկերու հեղինակներուն որոշ փոխադարձ պայմաններով , կամ գնելով երկերը՝ կամ յանձն առնելով հրատարակութիւնը . և այլ բոլոր հնարաւոր միջոցներով պէտք է թեւ տայ հայագիտական ուսումներու մշակմանը թէ՛ հայ և թէ՛ օտար լեզուներով :

բ . Պէտք է ձգտի հայագիտական բարձրագոյն կամառի մը հաստատմանը :

գ . Պէտք է կազմակերպէ հայերէնի թարգմանելու գործը ամէն տեսակի գիտական երկերու և հատուածներու , որոնք օտար գրականութիւններու մէջ հայ կեսաքը կը շօշափեն , հայ երկիրը , հայ անցեալն ու ներկան :

դ . Պէտք է կազմակերպէ հրատարակութիւնը կամ վերահաստակութիւնը հին հայ գրական բնագիրներու , ձեռագիրներու ժողովրդական բնահիւսութեան ժողովածուներու . ինչպէս և աւելի մօտիկ դարերէն ամէն տեսակի պատմական վաստավաթղթերու , յուշերու , դիւաններու , գծագրութիւններու հրատարակութիւնը :

ե . Պէտք է կազմակերպէ հին ու նոր հայ հեղինակներու երկերուն ամբողջական-գիտական հրատարակութիւնը :

5 . Այս բոլոր տեսակի գրքերն ու հրատարակութիւնները պէտք է ծախուին հնարաւոր աժան գիրներով : Այլ և պէտք է կազմակերպուի ամէն հայ տուն ու խանութ հայերէն գիրք մտցնելու գործը :

II . ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԻՐԱՀԱՏԵՔ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6. «Հայ Կրթական և Հրատարակչական Համագույցին Ընկերութիւնը» հիմնուած է Գահիրէի մէջ 1928 թուի Մայիս 28ին :

7. Ան իրաւական տեսակէտէն մասնաւոր խմբանուն Ընկերութիւն մըն է (Société en nom collectif) բաղկացած տասնընդինգ իրաւատէր անդամներէ :

8. Ընկերութեանս իրաւատէր անդամներուն տասնընդինգ թիւը մշտապէս պէտք է մնայ անփոփոխ : Ընկերութեանս այդ տասնընդինգ իրաւատէր անդամները առաջին անգամ՝ ընտրած են իրար ու կապուած են իրարու փոխագործ համաձայնութեամբ : Եւ ընտրուած են ցկեանս :

9. Մեռած և կամ որեւէ պատճառով ինքնակամ Ընկերութենէս քաշուող իրաւատէր անդամի մը փոխարէն , մնացած անդամները ձայներու 3/4ի մեծամասնութեամբ կ'ընտրեն նոր իրաւատէր անդամ՝ մը իրենց առաջին խակ ընդհանուր ժողովին , և նորէն ցկեանս : Նոյն 3/4ի մեծամասնութեամբ իրաւատէր անդամ՝ մը կրնայ հեռացուիլ Ընկերութեանս կազմէն :

ա . Ընդհանուր Ժողով

10. «Հայ Կրթական և Հրտարակչական Համագույցին Ընկերութեան» ամբողջ գործունէութեան, ձեռնարկներուն ու գոյքերուն տէրն ու տիրականը այդ տասնընդինգ

հինգ իրաւատէր անդամներու Ընդհանուր Ժողովը է :

11. Այդ Ընդհանուր Ժողովները պէտք է գումարուին պարտադիր կերպով տարին անգամ մը . կը հրաւիրուին Վարչութեան կողմէ , գումարման օրէն գոնէ երկու ամիս տուաջ գրաւոր հրաւերով : Վարչութիւնը իրաւութիւնը իրաւունք ունի նաեւ կանչելու տրանկարդ Ընդհանուր Ժողովներ : Վարչութիւնը երեք ամսուայ ընթացքին պարտական է Ընդհանուր Ժողով գումարելու , եթէ գըրաւոր կերպով այդպէս պահանջեն իրաւատէր անդամներէն հինգը :

12. Հեռակայ իրաւատէր անդամները կրնան գրաւոր կերպով զրկել իրենց ձայնը օրակարգի այս ու այն որոշ հարցին կամ բոլոր հարցերուն համար : Կրնան նաև որոշ հարցի մը կամ բոլոր հարցերուն համար իրենց ձայնը փոխանցել ունէ անձամբ ներկայ եղող անդամի մը . պայմանով որ ներկայ եղող ընկերը հարցի քուէրկութեան միջոցին ընդլամէնը երկու ձայնէն աւելի չունենայ :

13. Ընդհանուր Ժողովը օրինական կը համարուի , երբ անձամբ ներկայ են ութը անդամ : Ժողովը օրինական է նաեւ , երբ անձամբ ներկայ են եօթը անդամ , բայց ներկայ ձայներու թիւը հասած է տասնի . Ժողովը օրինական է նոյնպէս , երբ անձամբ ներկայ են միայն վեց անդամ , բայց ներկայ ձայներու թիւը հասած է տասերկուքի :

Նամակով զրկուած ձայն մը ներկայ կը համարուի ժողովին , եթէ օրակարգի գոնէ մէկ հարցին տուած է իր կարծիքը : Միւս կէտերու վերաբերմամբ ձեռնպահ կը համարուի , եթէ ընկերոջ մը փոխանցած չէ իր ձայնը :

14. Ընդհանուր Ժողովին մէջ բոլոր հարցերը , ինչպէս և բոլոր ընտրութիւնները կը կատարուին ձայներու պարզ ու կայուն մեծամասնութեամբ , այսինքն առ

նուազն ութը ձայնով . բացի այն պարզաներէն որոնք այս կանոնագրին մէջ յատկապէս նախառեսուած են : Այս կանոնագրին մէջ որեւէ փոփոխութիւնը կը պահանջէ առ նուազն տասերկու ձայնի մեծամասնութիւն :

15. Ընդհանուր Ժողովի գործն է :

ա . Ընկերութեանն բոլոր ձեռնարկներուն ու գործունէութեան նախագծումն ու որոշումը, ինչպէս և դպրոցական և այլ հաստատութիւններու ծրագիրներուն վաերացումը :

բ . Վարչութեան նախորդ տարուան գործունէութեան և հաշուետուութեան քննութիւնն ու վաերացումը :

գ . Յաջորդ տարուան գործունէութեան ու պիտօնէի հաստատումը :

դ . Խնամակալ Յանձնաժողովներու ընտրութիւնը :

ե . Վարչութեան ընտրութիւնը :

16. Ընդհանուր Ժողովը կրնայ վճիռ կայացնել միայն այն հարցերուն վրայ, որոնք նախապէս նշանակուած են Վարչութեան հրաէրին հետ զրկուած օրակարգին մէջ : Օրակարգին մէջ պէտք է մտցուած ըլլան այն բոլոր խնդիրները, որոնց մտախն գրաւոր պահանջ է ներկայացուած իրաւատէր երեք անդամի կողմէ, որոնք վարչութեան մէջ չեն, կամ Խնամակալ Յանձնաժողովի մը կողմէ :

բ . Վարչութիւն

17. Վարչութիւնը կազմուած է հինգ անդամէ, ընտրուած է երեք տարուան համար, իր անդամները վերաբնարելի են : Նախ կ'ընտրուին նախագահն ու գանձապետը, ետքը միւս երեք անդամները, և բոլորն ալ կ'ընտրուին ընկերութեանս իրաւատէր կամ աջակից անդամներուն մէջէն :

18. Վարչութեան հինգ անդամներէն ամէն մէկը կը ստոձնէ աշխատանքներէն մէկ որոշ բաժնի ղեկավարութիւնը, բայց անխտիր ամէն գործի համար պատասխանատուեն ամէնքը հաւաքաբոր։ Ամէն կարգադրութիւն պէտք է բխի վարչական ժողովէն, որուն որոշումներուն արձանագրութիւնները պէտք է ստորագրուին ժողովին ներկայ եղող անդամներէն։

19. Վարչութիւնն է ընկերութեանս վերին գործադիր ու ղեկավար մարմինը, ան է իր բոլոր հաստատութիւններու տեսչութիւնները կամ անօրէնները նշանակողը, պայմանաւորուողը և հրահանգներ տուողը։ Վարչութեան և անոր գործակից ու ենթակայ մասերուն միջեւ որեւէ տարակարծութեան պարագային պարագիր է Վարչութեան տեսակէտը մինչեւ յաջորդ ընդհանուր ժողովին որոշումը։

20. Վարչութիւնն է ընկերութեանս ներկայացուցիչը արտաքին աշխարհի, օրէնքի ու դրամական հաստատութիւններու հանդէպ։ Ամէն պաշտօնական գրութիւն պէտք է կրէ նախագահին կամ անոր փոխարինողին և ուրիշ անդամի մը ստորագրութիւնը։

21. Վարչութիւնն է ամէն տեսակի նուէրներ, կը-տակներ ու գումարներ գանձողը կամ ինքը անձամք, կամ իր նշանակած Տեղական Մասնախումբերու միջոցով և կամ ընկերութեանս Խնամակալ Յանձնաժողովներուն միջնորդութեամբը։ Անխտիր բոլոր գումարները պէտք է կեղը ունանանան Վարչութեան ձեռքը և հոնկէ է որ պէտք է անցնին գործադրութեան։ Վարչութեան դրամական գործառնութիւնները պէտք է կրեն նախագահին ու գանձապետին կամ անոնց փոխարինող ընկերներուն ստորագրութիւնները, երբ իրենք բացակայ են։

22. Վարչութիւնը ամէն տարի գրաւոր տեղեկագիր կը ներկայացնէ Ընդհանուր ժողովին ընկերութեան տար-

ուստի մը գործունեութեան ու վիճակի մասին ինչպէս և կը ներկայացնէ տարուսն մը դրամական հաշուեառութիւնը :

23. Վարչութիւնը կը ներկայացնէ Ընդհանուր Ժողովին յոջորդ տարուան նախահաշվաները և գործունէութեան նախագիծը : Վարչութիւնն է, որ կ'ուսումնակիրէ ու կը մշակէ նոր ձեռնարկներու և նոր փոփոխումներու ծրագիրները պատուիան տնօրէններուն կամ տեսչութիւններուն հետ խորհրդակցելով և ինսամուկալ Յանձնաժողովներուն կարծիքը տանելով :

III. Ընկերութեան ԱԶԱԿԻՑ ՄԱՐՄԻՆԵՐԸ

24. Բոլոր իրաւասուէր անդամներու և յատկապէս Վարչութեան ջմնքը ըլլարու է գտնե՛լ ամէն կողմ ցըրուած հայ գողութիւններուն մէջ ընկերութեանս աջակից և օժանդակող անդամներ այսինքն ընկերութեանս նախատակներուն համակրող և ընկերութեանս կազմին ու գործունէութեանը վատահացող անձեր որոնք միանուազ գումարներով կամ պարբերուկան վճառումներով հայրաւոր դարձնեն ընկերութեանս ձեռնարկներուն լիակատար յոջողութիւնը :

ա. Խնամակալ Յանձնաժողովներ

25. Այդ նպաստակով ընկերութեանս Ընդհանուր Ժողովը կ'ընտրէ քանի մը վերին Խնամակալ Յանձնաժողովներ մեր գողութային գլխաւոր կեդրոններուն մէջ, որոնք հեռու են ընկերութեանս կեդրոնէն :

26. Խնամակալ Յանձնաժողովները կազմուած կ'ըլլան հինգ կամ եօթը հոգիէ, անդամները ընտրուած

Կ'ըլլան երեք տարուան համար, բայց վերընտրելի է իրենք կ'ընտրեն իրենց մէջ իրենց նախադանն ու գանձապետը։ Եւ նախագահի հրաւէրով պարբերաբար կը հաւաքուին ժողովի։ Պէտք է պահեն իրենց ժողովներու որոշումներուն արձանագրութիւնը, որոնց պատճենը կանոնաւոր կերպով պէտք է զրկուին վարչութեան։

27. Խնամակալ Յանձնաժողովները ունին երեք դեր։ Առաջին՝ մնայուն խորհրդականներ են ընկերութեան Վարչութեան, որուն հետ մշտական հաղորդակցութեան մէջ են գտնուելու։ Նախօրօք անսնց կը տեղեկացուի ձեռնարկուելիք նոր գործերու ու ծրագիրներու մասին և կը խնդրուի իրենց կարծիքը։ Անոնք իրենց կողմէն ալ միշտ կընան ընել առաջարկներ։ Ամէն տարուան վերջը իրենց կը զրկուի Վարչութեան տպագրուած տեղեկագիրն ու հաշուետուութիւնը քննութեան առնելու և իրենց թերաբրանքներն ու դիտողութիւնները ընելու համար։ Խնամակալ Յանձնաժողովներու սահմանին մէջ գործող դպրոցական և այլ տմէն տեսակի հաստատութիւններու տնօրիչներն ու վարչութիւնները ընտրելու ժամանակ նախագէս կ'առնուի Խնամակալ Յանձնաժողովին կարծիքը։

28. Երկրորդ՝ Խնամակալ Յանձնաժողովները կը ջանան գտնելու նոր նուիրատուններ նոր գումարներ, հասոյթներու տեւական կամ պատահական նոր աղբիւրներ. Բնչուց և պարբերական յանձնառութիւններ ընկերութեանս մէկ որոշ ձեռնարկին կամ անոր ընդհանուր գանձին համար։

29. Երրորդ՝ Խնամակալ Յանձնաժողովները իրենց սահմաններուն մէջ կը ներկայանան իրբեւ Վարչութեան լիազօր իրաւական ներկայացուցիչը նոյն սահմաններուն մէջ ընկերութեանս ունեցած ստացուածքներուն, կտակներուն և իրաւունքներուն յանձնացման,

հոգածութեան և հարոյթներու գանձման համար :

30. Գանձուած հասոյթները իրենց հաշխաներուն հետ տարուան մէջ պարբերաբար կը փոխանցուին Վարչութեան, ինչպէս և նուէրներն ու գոյացած միւս գումարները : Վարչութիւնը ստացած նուէրներն ու օժանդակութիւնները, անդամական տոմարներուն մէջ արձանագրելին ետքը՝ պաշտօնական ստացագիր կը զրկէ նուիրուառներուն :

31. Տարին անգամ մը նոսխապէս համաձայնած ամսու մը մէջ Խնամակալ Յանձնաժողովները կը զրկեն Վարչութեան իրենց տարուան մը գործունէութիւնն աեղեկադիրն ու հաշուեառութիւնը :

բ. Տեղական Մասնախումբեր

32. Ընկերութեանս Վարչութիւնը և Խնամակալ Յանձնաժողովները կը նշանակեն իրենց յարմար դատած վայրերուն մէջ Տեղական Մասնախումբեր : Խնամակալ Յանձնաժողովներէն ամէն մէկը միայն իր սահմաններուն մէջ, իսկ Վարչութիւնը այն բոլոր վայրերուն մէջ, ուր Խնամակալ Յանձնաժողովներու թեւարկութիւն չկայ : Տեղական Մասնախումբերը կը հրատիրուին առ առաւելն երեք տարիով, բայց վերընտրելի են իր անդամները :

33. Տեղական Մասնախումբերը կրնան կազմուած ըլլալ երեք, հինգ կամ եօթը հոգիէ, որոնցմէ մէկը նախագահ, երկրորդ մը՝ գանձապահ : Տեղական Մասնախումբերու պարտականութիւնն է՝ ա) Անձնական կապերով կամ հրապարակային խօսքով ժողովրդականացնել ընկերութեանս անունը. բ) Ամենուն բացայացտ դարձնել ընկերութեանս գերին ու գործին բացառիկ կարեւորութիւնը ազգային ինքնապաշտպանութեան տեսակէն, գ) Գանձել միանուագ վճարող նոր աջակիցներ և արձանագրել նոր պարբերական վճառողներ, դ)

գանձել կանոնաւոր կերպով այդ ամէն տեսակի վճարումները :

34. Ամէն ստացուած գումարի համար Տեղական Մասնախումբը ընկալագիր պիտի տայ ընկերութեանս պաշտօնական թղթին վրայ, Վարչութեան կամ Խնամակալ Յանձնաժողովի կնիքը կրող և տեղական Մասնախումբին գանձապետին ստորագրութիւնը :

35. Տեղական Մասնախումբերը հասոյթները աւելցնելու համար կը կազմակերպեն զանազան ներկայացումներ, հանդէսներ, ընթերցումներ ինչպէս և վիճակախաղ, աճուրդ, շքանիշերու վաճառում, ընկերութեանս գրքերը ծախելու օր, և ուրիշ ամէն տեսակի հաւաքական նույիրումներ և հանգստակութիւն :

36. Այս գանապան աղբիւրներէն Տեղական Մասնախումբերուն ձեռքբք գոյացած գումարները իրենց մանրամասն հաշիւներուն հետ շուտ շուտ պէտք է փոխադրուին գերազան մարմնին ձեռքբք : Եւ երբ հոնկէ այ այդ գումարները իրենց հաշիւներուն հետ կը հասնին Վարչութեան ձեռքբք՝ բոլոր գումարները անդամական տոմարներուն մէջ արձանագրուելին ետքբք՝ Վարչութեան կողմէ նույիրատուններուն և Մասնախումբերուն կը զրկուին պաշտօնական ստացագիր Ամսավճառները յականէ - յանուանէ յիշատակուած կ'ըլլոն Մասնախումբին զրկուած ստացագրին մէջ :

37. Տեղական Մասնախումբերն են, որ կը հոգան գիշերային շրջուն և այլ տեսակի լրացուցիչ դասընթացներու, ընթերցումներու, շարժապատկերներու, լեզուի դասերու, գիտական ուսումներու կազմակերպումը. կը հոգան կամ անմիջապէս իրենց նախաձեռնութեամբ ու Վարչութեան համաձայնութեամբ կամ ումէն կերպ աջակցելով Վարչութեան կողմէն զրկուած շրջուն դասախոսներու և ուսուցիչներու աշխատանքին :

38. Տեղական Մամուխումբերն են, որ կ'օժանդակեն ընկերութեանս հրատարակած գրքերու տարածման դործին իրենց շրջանին մէջ. կամ ուղղակի իրենց ջանքերովը և կամ ամէն կերպ աջակցելով վարչութեան կողմէն այդ նպատակով զրկուած յատուկ ոնձերուն :

39. Տեղական մամուխումբերու պարտականութեան մէջն է նուեւ տարին գոնէ անգոմ մը հրատիրել ընկերութեանս աեղական անդամները և ա) Ներկայացնել անոնց իրենց աեղական դործունիութեան պատկերը, բ) Խորհրդակցիլ ընկերութեանս աեղական մամուխումբինը բարձրացնելու միջոցներու մասին, գ) Կարդուլ ընկերութեանս վարչութեան զրկուած տարեկան աեղեկագիրն ու հաշուեատութիւնը, և դ) Լսել այդ տոիթով անդամներու թելտերոններն ու առաջարկները :

40. Տեղական Մամուխումբերը, պէտք է պահեն իրենց ժողովներուն մէջ տուած որոշումներուն արձանագրութիւնները, որոնց պատճէնները պէտք է զրկուին գերադաս մարմին : Այլ և տարին անգոմ մը նախորշուած ամսու մը մէջ իրենց տարուան մը գործունէութեան տեղեկագիրն ու հաշուեատութիւնը պէտք է ներկայացնեն գերադաս մարմին : Այդ բոլոր հաշիւնները, աեղեկագիրները և արձանգրութիւնները ի վերջոյ կերպոնանալու են Վարչութեան ձեռքը :

IV. ԸՆԿԵՐՈՒԹ. ԱՏԱՑՈՒԱԾՔՆԵՐՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

41. Ընկերութեանս ստացուածքները կը կազմին ա. Այն հասութաքեր կալուածները, չնոքերը, իրերը, արժէթղթերը, ապահովագրութեան պօլիսները և այն ամէն գումարները, որ նուիրուած կամ կտակուած են ընկերութեանս անձեռնմխելի մնալու պայմանով :

որոնց շահագործումն է միայն թոյլատրելի :

բ. Այն դպրոցական շխնքերը, ապարանը, ձուլարանը, թղթարանը, կաղմասունը, խանութները, ըլլան նուիրուած թէ զնուած, որոնք անմիջապէս կը ծառայեն դպրոցական հրատարակչական գործին և ընկերութեանս կենդանի գործունէութեան մէկ պիտոնի մասը կը կազմեն :

գ. Ընկերութեանս գնած կամ նուէր սուացած դպրոցական գոյքերը, գրագտարանները, հաւաքածուները, նկարները, քարտէզները, Փիզիֆական ու քիմիական աշխատանոցները, ձեռական արհեստանոցները և գործիքները, ինչպէս և ընկերութեանս հրատարակչական հաստատութիւններուն և մթերանոցներուն մէջ ունեցած գոյքերը, կազմուածները և գործիքները, գնուուծ կամ նուիրուած :

դ. Ընկերութեանս հրատարակութիւններուն գեռչժախուած դէզքը :

42. Ընկերութեանս եկամուտները կը կազմեն՝

ա. Անձեռնմխելի սուացուածքներուն բերած տոկուներն ու եկամուտները :

բ. Ընկերութեանս բանեցուցած ձեռնարկներուն բեռած զուտ շահը :

դ. Ընկերութեանս եղած միանուագ նուէրները ամէն տեսակի ու ձեւի, իրրեւ դրամ, իրրեւ նիւթեղին, իրրեւ գործիք, իրրեւ շխնք, իրրեւ հող, որոնք ընկերութեանս կողմէն կրնան նկատուիլ ու վերածուիլ արամադրելի դրամի :

դ. Ընկերութեանս հանգէպ եղած պարբերական յանձնառութիւնները, ինչպէս են գիշերօթիկ կամ ցերեկօթիկ սաներուն վճառը հոգալը. որոշ տեսակի կամ շարքի երկերու հրատարակութիւնը սուանձնելը, որոշ աւղղութեամբ հեղինակութիւններուն պարբերական

նպաստ մը՝ մրցանակի կամ այլ ձեւի տակ. ընկերութեանս զանազան ձեռնակներուն մէջ որոշ նիւթեղէնի մը հայթայթում ը. եւայլն :

ե. Ընկերութեանս պարբերական անդամավճարները
գ. Ընկերութեանս մարմիններուն միջոցով ձեռք
բերուած յաւելուածական ու լրացուցիչ գումարները,
ինչպէս են ներկայացումներէ, հանդէմներէ ու խաղերէ
գոյացած գուտ տրդիւնքը ամէն տեսակի պատահական
ու հաւաքական նուէրներ զանազան հաւաքոյթներու
միջոցին՝ վիճակախաղ, աճուրդ, նիշերու վաճառում, և
այլն :

է. Դպրոցական հաստատութիւններու աշակերտ-
ներէն գանձուած թօշակները,

ը. Ընկերութեանս հրատարակութիւններուն վաճա-
ռումէն գոյացած գումարները :

43. Այս բորոր եկամուտները միասին առած կը
կազմեն ընկերութեանս տարեկան ընդհանուր մուտքը,
որը կը բաժնուի երեք մնառուկի :

ա) Ընդհանուր տարեկան եկամուտի տասը տոկոսը
կը յատկացուի ստացուածի Ֆօնիշին, հետզհետէ ձեռք
բերելու համար ընկերութեանս նպատակներուն ծառա-
յող սեփական որհեստանոցներ, չէնքեր ու հողեր :

բ.) Տարեկան ընդհանուր եկամուտի հինգ տոկոսը
կը յատկացուի պահեստի Ֆօնիշին, ձախորդ տարիները և
անսպասելի պատահարները դիմագրաւելու համար :

գ.) Տարեկան ընդհանուր եկամուտի մնացած մեծա-
գոյն մասը կը յատկացուի գործունեութեան Ֆօնիշին :

44. Պիւտճէններու կազմութեան միջոցին ճիդ պիտի
թափուի հնար եղածին չափ փոքրացնելու վարչական
ըսուած ծախքերը, որոնք յամենայն դէպս պէտք չէ
անցնին տարեկան ընդհանուր ծախքերուն տասը տոկո-
սը : Վարչութեան անդամներուն, Խնամակալ Յանձնա-

ժողովներուն և Տեղական Մասնախումբերուն աշխատանքը անվճար է :

V. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՈՒՇՈՒՄԸ

45. Ընկերութիւնս կրնայ լուծուիլ միայն բացառիկ ժողովի մը որոշումովը. որ հրաւիրուած պիտի ըլլայ եղած իրաւատէր անդամներու 3/4ի մեծամասնութեամբը և որուն պիտի հրաւիրուին հաւասար ձայնի իրաւունքով (ա) իրաւատէր անդամները, (բ) Խնամակալ Յանձնաժողովներէն երկ-երկու ներկայացուցիչ, և (գ) տեղական Մասնախումբերէն մէյ-մէկ ներկայացուցիչ:

46. Ընկերութեանս լուծման պարագային ընկերութեանս ունեցած բոլոր ստացուածքն ու հարատութիւնները պէտք է փոխանցուին Հայաստանի կառավարութեան: Եւ փոխանցումը պիտի կատարուի այդ բացառիկ ժողովի կողմէն ընտրուած յառուկ յանձնաժողովի մը ձեռքով:

Այս ընդհանուր կանոնագիրը միաձայն ընդունուած է ընկերութեանս առաջին Ընդհանուր Ժողովին մէջ՝ 1928 թուի Մայիս 28ին և առժամեայ բնաւորութիւն կը կրէ: Երբ ընկերութեանս իրաւատէր անդամներուն թիւը լրանայ՝ այս կանոնագիրը պէտք է ենթարկուի նորէն անգամ մը ընկերութեանս Ընդհանուր Ժողովի քննութեանն ու վաւերացմանը.

Ընկերութեանս սուաջին Ընդհանուր Ժողովին արձանագրութիւնը ստորագրած են հետեւեալ ինը իրաւատէր անդամները :

Աղբալեան Նիկոլ,	Աղեքսանդրիա
Եսայեան Ստեփան,	Գանիրէ
Իփեկեան Գասպար,	Զակազիկ
Խաչատրեան Մինաս,	Աղեքսանդրիա
Մալխասեան Սարգիս,	Աղեքսանդրիա
Լեւոն Շանք,	Փարիզ
Պալբենեան Յակոբ,	Գանիրէ
Պալբենեան Միղրակ,	Գանիրէ
Օհանջանեան Համօ,	Գանիրէ

1928 Մայիս 28ի նոյն նիստին մէջ ընտրուած է Ընկերութեանս Վարչութիւնը հետեւեալ կազմով.

Համօ Օհանջանեան, Նախագահ
Ստեփան Եսայեան, Գանձառահ

Նիկոլ Աղբալեան
Գասպար Իփեկեան
Լեւոն Շանք } Անդամներ

Նախագահի հասցեն՝

Rue Choabra 45, Le Caire, Egypte